ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1) Նիստի անցկացման վայրը, տարին, ամիսը և ամսաթիվը, նիստը սկսելու և ավարտելու ժամերը՝

ՀՀ կրթության և գիտության նախարարարություն/ հասցե՝ Վ. Սարգսյան 3/, 2017 թ. դեկտեմբերի 26, ժամը՝ 15^{00}-17^{00}

2) Նիստի օրակարգը՝

1) «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում:

3) Նիստին մասնակցող խորհրդի անդամների, հրավիրված անձանց և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների տվյալները՝

Նախարարին կից հասարակական խորհրդի 24 անդամից նիստին մասնակցել է 13-ը՝

ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Վահրամ Մկրտչյան	ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ
Ռուբեն Միրզախանյան	Կրթության մասնագիտական զարգացման կենտրոն
Սուսաննա Թադևոսյան	Հոյսի կամուրջ
Թամարա Սաղաթելյան	«Լուսնյակ» հասարակական կազմակերպություն
Արևիկ Սարգսյան	Մեծահասակների կրթություն և ուսումնառություն

Կարինե Թումանյան	Հանրային խորհուրդ
Սուրեն Չիբուխչյան	Հայաստանի գործատուների միություն
Արամ Ծատուրյան	ԳԹԿ թեստաբանության բաժնի գլխավոր մասնագետ
Ատոմ Հակոբյան	ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկի միջնակարգ դպրոցի տնօրեն
Ազատ Հակոբյան	Արարատի պետական քոլեջի դաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն
Խորեն Ոսկանյան	ՀՀ Արամվիրի մարզի թիվ 6. Հիմն. դպրոց
Բորիս Մակիչյան	Երևանի Հյուսիսային համալսարան
Արթուր Աղաբաբյան	Մ. Խորենացու անվան համալսարան
Դիանա Հովսեփյան	Հայ օգնության միություն

Հրավիրված անձինք՝

Ռոբերտ Սուքիասյան	ԿԳՆ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչության պետ
Լուսինե Մարգարյան	ՀՀ ԿԳ նախարարի մամուլի խոսնակ
Կարինե Մանուկյան	ԿԳՆ հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչության գլխավոր մասնագետ
Ամալյա Ավետիսյան	ԿԳՆ հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչության գլխավոր մասնագետ

4) Քննարկվող հարցերի և ելույթների հիմնական դրույթները՝

Նիստի սկզբում խորհուրդը հաստատել է օրակարգը, այն է՝ «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքի նախագծի քննարկում /զեկուցող՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչության պետ Ռոբերտ Սուքիասյան/:

Նիստը վարել է ԿԳ նախարարի տեղակալ Վահրամ Մկրտչյանը, նախագիծը ներկայացրել է բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչության պետ Ռոբերտ Սուքիասյանը:
ԿԳ նախարարի տեղակալը, հակիրճ ներկայացնելով առաջարկվող օրինագծի հիմնական սկզբունքները, նշել է, որ այն առանցքային քաղաքական հարցեր է լուծում բարձրագույն կրթության համակարգում և այդ իմաստով հեղափոխական փոփոխություններ է նախատեսում բուհերի կառավարման, ֆինանսավորման ոլորտներում. «Առաջին խնդիրը, որ լուծվում է՝ կառավարման խորհուրդները քաղաքական ազդեցություններից դուրս բերելն է: Նոր նախագծով միանշանակ բացառվում է որևէ քաղաքական պաշտոնյայի կամ մարզպետի ներկայություն բուհի կառավրման խորհրդում: Եթե ներկայումս 25 տոկոս համամասնությամբ կառավարման խորհուրդներում ներգրավված էին լիազոր մարմնի, հիմնադիրի, ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչները, ապա նոր նախագծով խորհուրդի կառուցվածքը հիմնովին փոխվում է. 30 տոկոս պրոֆեսորադասախոսական անձնակազմ, 10 տոկոս ուսանողություն, 30 տոկոս գործատուներ, 20 տոկոս՝ հիմադիր, և ընդամենը 10 տոկոս՝ լիազոր մարմին: Եթե հաշվի առնենք, որ պետական բուհերի հիմնադիրը կառավարությունն է, իսկ լիազոր մարմինը՝ ԿԳՆ-ն, ապա գործող օրենքով պետությունը կառավարման խորհրդում 50 տոկոս ներկայացվածություն ունի: Նոր նախագծով այդ ներկայացվածությունը կլինի 30 տոկոս: Հաջորդ կարևոր հարցը ֆինանսավորման համակարգի փոփոխությունն է. գործող օրենքով պետպատվեր համակարգում սովորող ուսանողը միանգամից երեք արտոնություն է ստանում՝ անվճար կրթություն, տարկետման իրավունք և պետության կողմից տրվող 5000 դրամ կրթաթոշակ: Մենք այսօր ունենք մի վիճակ, երբ բուհերի բյուջեների 95 տոկոսը գոյանում է ուսման վարձավճարներից: Այս կախվածությամբ պայմանավորված՝ բուհի ղեկավարությունը չի ուզում հրաժարվել անգամ ցածր առաջադիմությամբ ուսանողից: Նախագծով ֆինանսավորման երեք մոդել է

առաջարկվում՝ առաջինը բուհի նվազագույն կարիքների համար տրվող բազային ֆինանսավորումն է, երկրորդը մրցութային կարգով տրվող կրթաթոշակները և երրորդ՝ մրցակցային գործակիցով տրվող ֆինանսավորումն է: Նախագծով բուհերին առաջարկվում է նաև ստեղծել անձեռնմխելի ֆոնդեր»,- նշել է Վահրամ Մկրտչյանը: ԿԳ նախարարի տեղակալի խոսքով փորձ է արվել նաև ամրապնդել բուհերի ու գիտական համակարգի կապը և այդ նկատառումով սահմանվել է, որ կրեդիտների որոշակի քանակություն կարելի է ստանալ նաև գիտական հաստատություններում: Սա ևս որոշակիորեն կապված է ֆինանսավորման համակարգի հետ, որովհետև կրեդիտները պետք է ունենան որոշակի գնային արժեք՝ ուսանողին կրեդիտներ ապահովող գիտական հիմնարկը բնականաբար պետք է ստանա համարժեք գումար, որը հաշվարկված է բուհի կողմից ուսման վարձավճարի մեջ: Հաջորդ կարևոր խնդիրը բուհերի միջազգայնացումն է և այստեղ ևս լուրջ փոփոխություններ են նախատեսվում. «Մագիստրոսական կրթական ծրագրերի 30, իսկ ասպիրանտական կրթական ծրագրերի 50 տոկոսը կարող է կազմակերպվել օտար լեզուներով: Որակական փոփոխությունների են ենթարկվում նաև ծրագրերը, այդ նպատակով առաջ է քաշվում ցանցային համալսարանների և գիտակրթական կլաստերի գաղափարը: Որպես վերահսկողական գործիք, պետության կողմից կօգտագործվի ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրումը»,- նշել է ԿԳ նախարարի տեղակալը: Նա անդրադարձել է նաև օրինագծով ներկայացվող նոր որակավորմանը՝ մասնակի բակալավրիատին և այլ փոփոխությունների:

5) Նիստին մասնակցող խորհրդի անդամների ներկայացրած հանրային առաջարկները, դիտողությունները և դրանց վերաբերյալ պաշտոնական մեկնաբանությունները.

Հասարակական խորհրդի անդամները հարցեր են ուղղել ԿԳ նախարարի տեղակալին: Մասնավորապես Արարատի պետական քոլեջի դաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն Ա. Հակոբյանը հարց է բարձրացվել, թե օրինագծով առաջարկվող հեռակա կրթական համակարգի վերացման պարագայում ինչպես է կարգավորվելու քոլեջների շրջանավարտների անցումը դեպի բուհ՝ նկատի ունենալով, որ այժմյան օրենքով ՄԿՈՒ համակարգի շրջանավարտները կարող են իրենց կրթությունը շարունակել բուհի երկրորդ կուրսում՝ հեռակա բաժնում: ԿԳ նախարարի տեղակալը պարզաբանել է, որ հարցը կկարգավորվի օրենքի ընդունումից հետո՝ կառավարության

համապատասխան որոշմամբ: Ա. Հակոբյանը առաջարկել է հետագայում ենթաօրենսդրական ակտերի մշակման ժամանակ ներգրավել նաև ՄԿՈՒ ոլորտի փորձագետներին:

Երևանի Հյուսիսային համալսարանի ռեկտոր Բ. Մակիչյանն առաջարկել է բուհերի լիցենզավորման և հավատարմագրման ժամկետների փոփոխություն կատարել՝ մասնավորապես երկարաձգել: Բ. Մակիչյանին առաջարկվել է ՀՀ ԿԳՆ ներկայացնել գրավոր առաջարկ:

Հայաստանի գործատուների միության ներկայացուցիչ Ս. Չիբուխչյանն առաջարկել է ծրագրային հավատարմագրման ժամկետը հատկապես որոշ մասնագիտությունների, մասնավորապես SS ոլորտի մասնագիտությունների համար կրճատել:

Հանրային խորհրդի անդամ Կարինե Թումանյանը հարց է բարձրացրել բուհերում նույն մասնագիտությամբ նույն առարկայի դասավանդման ծրագրերում հանդիպող էական բովանդակային տարբերությունների մասին և այս առնչությամբ հայտնել մտահոգություն: բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչության պետ Ռոբերտ Սուքիասյանը պարզաբանել է, որ միասնական կրթական չափորոշիչներ բուհերի համար չի սահմանվում, քանի որ դա հակասում է ակադեմիական ազատությունների սկզբունքին, սակայն առաջարկվող ցանցային համալսարանների մոդելը ենթադրում է կրեդիտների փոխճանաչում. «Այսինքն բուհերը միմյանց հետ պետք է քննարկեն և համաձայնվեն ճանաչել միմյանց կրեդիտներն ու համադրելի դարձնեն կրթական ծրագրերը: Ցանցային համալսարանների ստեղծման ու ուսանողական շարժունության հիմքում դրված է կրեդիտների փոխճանաչումը, ինչն էլ իր հերթին որպես պահանջ դրվելու է ծրագրային հավատարմագրման հիմքում»,- ասել է վարչության պետը:

Հարցեր են հնչել, մասնագիտության դոկտորի՝ PhD որակարվորման և օրենի նախագծով առաջարկվող այլ փոփոխությունների մասին:

6) Ընդունված որոշումները՝ ներառյալ տվյալ որոշման վերաբերյալ քվեարկության արդյունքները.

Նիստի ավարտին ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հասարակական խորհուրդը որոշում է ընդունել՝ դրական եզրակացություն տալ «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքի նախագծին, պայմանավորվածություն է ձեռք բերվել հետագա մշակումների ժամանակ նկատի ունենալ ներկայացված առաջարկներն ու բարձրացված հարցադրումները:

Նիստի նախագահող՝ ՀՀ կրթության և գիտության Նախարարի տեղակալ Վահրամ Մկրտչյան

Արձանագրող՝ ԿԳՆ հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչության գլխավոր մասնագետ Կարինե Մանուկյան